ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«16» 02 2023թ.
№ պ/կանվ/2-218

«Երվադա» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 02231092
ՀՀ, ք. Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք 10/3
հեռ. 033-71-77-77

ՀՀ պաշտպանության նախարարության և «Երվադա» ՍՊԸ-ի միջև 31.10.2022թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-22-4/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Երվադա» ՍՊԸ-ն 2022թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 10.12.2022թ.-ը պետք է մատակարարեր 2 հատ բարձր անցողունակությամբ մեքենաներ (ձնագնաց), որոնք չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. փետրվարի 16-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Երվադա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3 232 497 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 30.12.2022թ.-ը ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ ձեռնարկում է միջոցներ՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների գանձման ուղղությամբ, որոնք համապատասխանաբար կազմում են 43 099 958 ՀՀ դրամ և 129 299 875 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ